ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՄԻԵԴ ԵՎ ՍԴ ԴԻՄԵԼԸ ՄԻԳՈՒՑԵ ԿԲԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ. ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿԱՐԾԻՔ

13.05.2016 11:59

Հայաստանի օրենսդրությամբ բարոյական վնասի փոխհատուցման չափերը շատ ավելի փոքր են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանվող փոխհատուցման չափերից: Այս մասին «Փաստինֆո»-ի լրագրողին հայտնեց ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ, փաստաբան Կարեն Մեժլումյանը:

Փաստաբանը նկատեց, որ իրենց հերթին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բարոյական վնասի դիմաց սահմանվող փոխհատուցման չափերն ավելի բարձր են եվրոպական զարգացած երկրների և ավելի ցածր, օրինակ, Հայաստանի պարագայում: Գուցե հաշվի են առնվում երկրների կենսապայմանները, նվազագույն սպառողական զամբյուղն և այլն:

Կարեն Մեժլումյանն ընդգծեց, որ Հայաստանի օրենսդրությամբ, մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքով սահմանված փոխհատուցման չափերը ՄԻԵԴ սահմանած «այդ փոքրից էլ ավելի քիչ է, շատ ավելի քիչ է»: Այսինքն՝ մարդը կարող է երկար տարիներ բանտում ազատազրկում կրել շատ վատ հոդվածով, որով դժվար է քրեակատարողական հիմնարկում գտնվել, սակայն արդարացվելու դեպքում փոխհատուցման փոքր գումար ստանալ: «Թեև բացառություն սահմանված է»,- հավելեց Կ.Մեժլումյանը:

Փաստաբանը գտնում է, որ Հայաստանում բարոյական պահանջի հիմքում պետք է դրվի Եվրոպական դատարանի կողմից սահմանված գումարի չափին համարժեք գումարային պահանջ: Երբ որ մերժվի այդ չափով փոխհատուցման պահանջը, կարելի է դիմել Եվրոպական դատարան՝ արձանագրելով, որ այդ փոխահատուցումն էական չէ և ըստ էության չի նպաստում խախտված իրավունքի վերականգնմանը, ինչպես նաև կանխարգելմանը: «Տեսնենք, Եվրոպական դատարանը դա վարույթ կընդունի՞, թե՞ ոչ: Եթե ընդունի, ի՞նչ որոշում կկայացնի: Այսինքն՝ ես այստեղ տեսնում եմ ստրատեգիական դատավարություն, ինչը միգուցե բերի այս ինստիտուտի զարգացմանը»,- ասաց Կ.Մեժլումյանը:

Փաստաբանը նշեց, որ ստրատեգիական դատավարության կարգով կարելի է դիմել նաև ՀՀ սահմանադրական դատարան և բարձրացնել ՄԻԵԴ նախադեպերով ստեղծված բարոյական վնասի հատուցման իրավունքը ՀՀ օրենսդրությամբ սահմանափակելու հարցը:

Եթե Սահմանադրական դատարանը ընդունի, որ գումարի փոխհատուցման չափը ավելի պակաս է, քան մինչ այդ ՄԻԵԴ-ն էր սահմանում Հայաստանի համար, ուրեմն Սահմանադրական դատարանը պետք է մեկնաբանի սրանով սահմանափակվո՞ւմ է այդ իրավունքը, թե՞ ոչ: Եթե Սահմանադրական դատարանն որոշի, որ իրավունքը սահմանափակվում է, ապա դա կլինի հիմք օրենսդրական փոփոխության համար, և Ազգային ժողովը պարտավոր կլինի փոփոխել օրենսդրությունը:

Կարեն Մեժլումյանը նշեց, որ փոփոխված ՀՀ սահմանադրության 81-րդ հոդվածը՝ Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան, սահմանում է, որ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում ՀՀ վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան» (Կ.Մեժլումյանը մասնավորեցնում է՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիման վրա ՄԻԵԴ որոշումները, պրակտիկան, այսինքն՝ նախադեպերը):

Նույն հոդվածի երկրորդ մասում նշվում է. «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

Այսինքն, ըստ փաստաբանի, հաշվի առնելով, որ Հայաստանի օրեսդրությամբ փոխհատուցման չափն ավելի պակաս է, քան Եվրոպական դատարանի նախադեպերով սահմանվածը, կարելի է մեկնաբանել, որ Հայաստանում այդ իրավունքը փաստորեն սահմանափակվում է:

Կարեն Մեժլումյանը հավելեց, որ Սահմանադրական դատարանը և հիշյալ սահմանադրական դրույթը, պետք է անցնեն փորձությունը, և բոլորը կտեսնեն, թե սահմանափակումը որքանով է կիրառելի՝ ընդհուպ դատարանների ու ՍԴ-ի կողմից:

Աղբյուր՝ Փաստինֆո

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })